Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցապահանջի մերժման պարագայում դատարանը գտնում է, որ դատական ծախսերի /այդ թվում՝ փաստաբանի վարձատրության/ հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[12]-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների /անգործության/ և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի .... դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[9]-րդ, 109-րդ, 192-րդ, 362-րդ հոդվածներով, 198-րդ հոդվածի 8-րդ մասով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՌՈՔԱՐՄ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցապահանջն ընդդեմ պատասխանողներ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատվիրատուի որոշումն անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների վերաբերյալ, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**